

**Անահիտ Սարդարյան**  
**ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու**  
**պատմության ամբողջի ասպիրանտ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Առաջին համարապետությունում արդարադատության նախարարությունը բացի համապատասխան ոլորտի հասարակական հարաբերությունները կառավարող կենտրոնական գործադիր մարմնի իրավասությունից ուներ նաև էական լիազորություններ մի շարք իրավապահպան ոլորտներում։ Որպես գործադիր նարմին՝ արդարադատության նախարարությունը կազմում էր գործադիր իշխանության համակարգի բաղկացուցիչ մասը և իրականացնում էր գործադիր-կարգադրիչ բնույթի գործունեություն, օժնված էր սեփական իրավասությամբ, ուներ իր կառուցվածքը, կիրառում էր իրեն բնորոշ գործունեության համապատասխան ձևերը և մեթոդները։ Այս առումով, այն կենտրոնական, ճյուղային իրավասության, միանձնյա, նշանակովի պետական մարմին էր։ Սակայն լինելով գործադիր իշխանության ճյուղային կենտրոնական մարմին՝ արդարադատության նախարարությունը շեղվելով գործադիր իշխանության կազմակերպման ճյուղային այլ մարմինների կազմակերպմանը բնորոշ սկզբունքներից, իրավապահպան ոլորտում կատարում էր նաև գործադիր մարմնին ոչ հարիր գործառություններ, մասնավորապես՝ դատախազական հսկողությունը, նոտարիատի կառավարումը, բանտարյան համակարգի, ինչպես նաև բնույթով իրավապահպան գործունեությանը նոտ այլ ոլորտների կառավարումը։ Այդ պարտականությունների կատարումն իրականացվում էին արդարադատության նախարարության համակարգի մեջ մտնող կառուցվածքային առանձին օղակների կամ գերատեսչական պաշտոնատար անձանց նիշոցով, որոնց կազմակերպակառուցվածքային և գործառության առանձնահատկություններն ել փորձել ենք վեր համել։

Առաջին հանրապետությունում դատախազական հսկողությունը որպես պետական գործունեության տեսակ, կազմակերպվել և գործել է համապատասխան կայսերական օրենսդրության, համաձայն որի դատախազական հսկողության համակարգի դեկավարը՝ որպես Հանրապետության գլխավոր դատախազ, կանգնած էր արդարադատության նա-

խարարը: Առաջին հանրապետության արդարադատության նախարարի իրավունքներն ու պարտականությունները, որպես գլխավոր դատախազ, նրա իշխանության սահմանները դատախազական հսկողության գծով սահմանված էին օրենքներով: Արդարադատության նախարարության իրավական կարգավիճակն ամրագրող կայսերական իշմնական իրավական ակտերն էին՝ «Ծանոթագրական իշմնական իրավունք» և «Ծանոթագրական իշմնական իրավունք»:

Այդ օրենքներով ամրագրված էին այնպիսի իշմնարար դատարանակազմական և դատավարական սկզբունքներ, ինչպիսիք էին՝ մրցակցության, մեղադրյալի պաշտպանության, անմեղության կանխավարկածի և այլն, որոնք և մեծ ազդեցություն են բողեղ դատախազության կարգավիճակի վրա: Դատախազությունը, ինչպես Ռուսական կայսրությունում, այնպես էլ Առաջին հանրապետությունում համարվում էր բացառապես դատական հսկողության նարմին, չուներ ընդիհանուր հսկողության գործառույթներ և կառուցված էր դատատարածքային սկզբունքով, այլ ոչ թե վարչատարածքային: Այդ պատճառով դատախազությունը ընդգրկված էր «դատական գերատեսչության» մեջ, սակայն ուներ իրեն հասուն ենթակայություն, կառուցվածք և իրավասություն:

Ընդհանրապես 19-րդ դարի երկրորդ կեսի դատական բարեփոխումների հետազոտողների գերակշռող մասի կարծիքով՝ բարեփոխման դատախազության էությունը, ի տարբերություն այլ պետական մարմինների, այն էր, որ վերջինս չուներ ո՞չ օրենսդրական, ո՞չ դատական, ո՞չ վարչական գործառույթներ: Դատախազությունն անմիջականորեն չէր միջամտում դատարանների գործունեությանը, ինչի վրա սակայն հսկում էր, իրավունք չուներ գնահատելու դատական գերատեսչության պաշտոնյաների և մարմինների գործունեությունը գործնական նպատակահարմարության տեսանկյունից, այլ միայն պարտավոր էր հսկել դրանց կողմից օրենքների պահպանման վրա, օրենքի խախտման դեպքում պաշտպանական պետական մեղադրանքը դատարանում<sup>1</sup>:

1920 թ. երկրորդ կիսամյակի համար հաստատված արդարադատության նախարարության նախահաշիվներով և հաստիքացուցակով դատախազական հսկողության համակարգը հետևյալ կառուցվածքն ուներ. ա)

<sup>1</sup> Ст. Казанцев С.М., Судебная реформа 1864 г. и реорганизация прокуратуры / В кн. Государственное управление и право. Ленинград, 1984, № 95:

Հայաստանի սենատին կից դատախազական հսկողություն՝ ի դեմս ավագ դատախազի և նրա օգնականի: 1920 թ. հոկտեմբերի 26-ի օրենքով սահմանավեց նաև սենատի ռազմական ավագ դատախազի պաշտոնը, որը ենթարկվելու էր ռազմական նախարարին և կատարելու էր գլխավոր ռազմական դատախազի գործառույթները, բ) դատական պալատին կից դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա երկու օգնականների, գ) Երևանի շրջանային դատարանի դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա հինգ օգնականների, դ) Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանային դատարանների դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա երկու օգնականների<sup>1</sup>:

Դատախազական հսկողության բոլոր պաշտոնատար անձանցից սենատի ավագ դատախազը նշանակվում էր օրենսդրի կողմից արդարադատության նախարարի ներկայացմամբ, իսկ մնացածները՝ սենատի ավագ դատախազի օգնականները, դատական պալատի ու շրջանային դատարանների դատախազներն ու նրանց օգնականները նշանակվում էին Նախարարների խորհրդի կողմից արդարադատության նախարարի ներկայացմամբ:

Դատախազության համակարգի կազմակերպման և գործունեության սկզբունքներն էին՝ միանձնյա դեկավարությունը, ստորադաս դատախազի բացարձակ ենթակայությունը վերադաս դատախազին: «Դատական հիմնարկությունների կանոնադրությունը» սահմանում էր դատախազների պատասխանատվության կարգը: «Դատախազները ենթակա էին կարգապահական պատասխանատվության գլխավոր դատախազի հայեցողությամբ: Օբեր-դատախազները կարող էին ենթարկվել նախազգուշացման, իսկ մնացած դատախազները բացի դրանց կարող էին ստանալ դիտողություն և նկատողություն, առանց ծառայության գրքույթում գրանցելու: Օկրուգային դատարանի դատախազների օգնականներին դրանց բացի կարող էին զրկել աշխատավարձից, ենթարկել կալանքի՝ մինչև 7 օր, իշեցնել պաշտոնը<sup>2</sup>:

Դատախազական հսկողության հիմնական ուղղություններն էին՝ ա) հսկողությունը հետաքննության և նախարանության վրա, բ) հսկողությունը դատարանում գործերը քննելիս օրենքների կատարման վրա, այդ

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, գ. 1, զ. 119, թթ. 1-8:

<sup>2</sup> Տե՛ս Российское законодательство X-XX веков. Судебная реформа, Т. 8, “Учреждение судебных установлений”, Էջ 266:

թվում նաև՝ քրեական գործերով մեղադրանքի պաշտպանության գործառույթը, զ) հսկողությունը դատարանների դատավճիռների և վճիռների կատարման վրա, այդ թվում նաև՝ հսկողությունն ազատազրկման վայրերի գործունեության օրինականության նկատմամբ:

Արդարադատության նախարարը՝ որպես հանրապետության գլխավոր դատախազ, իրականացնում էր հսկողություն դատախազության գործունեության վրա, իսկ դատախազների միջոցով՝ ընդհանուր իրավասության դատական մարմինների վրա:<sup>1</sup> Հսկողության իրավունքը բուն դատարանների և դատավորների գործունեության նկատմամբ իրականացնում էին միայն վերադաս դատարանները, բայց ոչ դատախազները: Քանի որ դատախազների վրա դրված էր քրեական հետապնդում հարուցելու, հանցագործության նախնական քննություն կատարելու, ինչպես նաև «դատական գործերի վարույթի ընթացքում օրենքների ճիշտ կատարումը դիտարկելու» պարտականությունը, այս արդարադատության նախարարը հնարավորություն էր ստանում դեկավարելու դատախազական հսկողության գործունեությունը քրեական գործի հարուցման պահից մինչև նրա վերջնական լրացումը դատարանում՝ շնորհիվ դատախազների գեկուցումների ու հաշվետվությունների, որոնք ներկայացվում էին արդարադատության նախարարին: Այդպիսով, արդարադատության նախարարը որպես գլխավոր դատախազ դատախազների միջոցով հսկում էր ինչպես հետաքննության մարմինների, այնպես էլ նախարանության մարմինների գործունեության օրինականությունը:

Դատական կանոնադրություններն արդարադատության նախարարին՝ որպես գլխավոր դատախազի, իրավունք էին տալիս իրականացնելու ընդհանուր հսկողություն դատարանների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության վրա: Այդ ընդհանուր հսկողությունն իրականացնելու համար օրենքը արդարադատության նախարարությանը դատական գործերի անկանգառ ընթացքի, դատական մարմինների ներքին կառուցվածքի և նրանցում գործավարության կանոնների պահպանության վրա դիտարկման իրավունք էր տալիս<sup>2</sup>: Այդ դիտարկումն արդարա-

<sup>1</sup> С্�в. Российское законодательство X-XX веков. Судебная реформа, Т. 8, “Учреждение судебных установлений”, стр. 60, № 253:

<sup>2</sup> С্�в. Российское законодательство X-XX веков. Судебная реформа, Т. 8, “Учреждение судебных установлений”, №п. 255, 258, 259:

դատության նախարարն իրականացնում էր իրեն ենթակա դատախազ-ների միջոցով<sup>1</sup>:

Արդարադատության նախարարությունը իրականացնում էր նոտա-րիատի կառավարումը: Համաձայն գործող օրենսդրության՝ նոտարա-կան գործառնությունն իրականացվում էին նոտարների և նոտարական արխիվներին կից ավագ նոտարների միջոցով՝ դատարանների հսկո-ղության ներքո<sup>2</sup>: Նոտարական մասի կանոնադրությունը սահմանում էր նաև, որ Անդրկովկասի այն վայրերում, որտեղ նոտար նշանակվելու ցանկություն ունեցող աճանքը քիչ են, և որտեղ այդ պաշտոնը կճանաչվի անհրաժեշտ, արդարադատության նախարարը Ծրջանային դատարանի ներկայացմամբ, նոտարի պարտականությունների կատարումը կարող էր դնել տեղական հաշտարար դատավիրների վրա<sup>3</sup>: Ինչպես երևում է արխիվային փաստաթղթերից, մինչև Հայաստանի Հանրապետության հոչակումը նոտարական կառավարումը հանրապետության տարածքում իրականացվում էր հիմնականում այս կարգով, այսինքն՝ Երևանի Ծրջա-նային դատարանի ներկայացմամբ արդարադատության նախարարը այդ պարտականությունների կատարումը դրեւ էր տեղական հաշտարար դատավիրների վրա: Դեռ Ռուսական կայսրության օրոք Երևանի Ծրջա-նային դատարանի հաստիքացուցակում կար ավագ նոտարի պաշտոնը, որը պահպանվեց նաև Հայաստանի Հանրապետության օրոք<sup>4</sup>: Կային նաև առանձին քաղաքների կամ վարչական տարածքների նոտարներ: Այսպես, օրինակ, Օրդուրաք քաղաքը ուներ հաստիքային նոտար, որին արդարադատության նախարարը 1918 թ. օգոստոսի 27-ին իր թիվ 17 կարգադրությամբ ազտել է պաշտոնից<sup>5</sup>: Այսպիսով, հաստիքային նո-տարների ինստիտուտը Հայաստանում կիրառություն չգտավ: Նոտար-

<sup>1</sup> Օրինակ՝ արդարադատության նախարարի հանձնարարության համաձայն՝ շրջանային դատարանի դատախազը 1920 թ. հունիսին նրան է ներկայացրել գե-կուցում Երևանի շրջանային դատարանի, դրան կից դատախազական հսկողութ-յունը և քննչական մասերի գործունեության վերաբերյալ /տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 117, թթ. 176-177/:

<sup>2</sup> Տե՛ս Полный Свод законов Российской Империи. п.р. Савича, 1904, Т. 16, часть 1, «Положение о нотариальной части», стр. 1, ст.1:

<sup>3</sup> Տե՛ս Полный Свод законов Российской Империи. п.р. Савича, 1904, Т. 16, часть 1, «Положение о нотариальной части», стр. 2, ст. 7:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 69, թ. 116:

<sup>5</sup> Տե՛ս «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918, թիվ 1. «Արդարադա-տության նախարարի կարգադրությունները»:

ների պարտականություններն այստեղ կատարում էին տեղական հաշտարար դատավորները, որոնց թիվը 1920 թ. ամռան դրությամբ քսանից ավել էր: Համաձայն օրենքի, նոտարները ենթակա էին այն Շրջանային դատարանին, որի դատական տարածքում գտնվում էր նրանց նստավայրը, այսինքն՝ գործում էին դրանց հսկողության ներքո: Իրենց պաշտոնական պարտականությունները նոտարները պետք է կատարեին միայն այդ շրջանի տարածքում, հակառակ դեպքում նրանց ակտերն իրավաբանական ուժ չունեին<sup>1</sup>:

1920 թ. ապրիլին Կարսի և Ալեքսանդրապոլի Շրջանային դատարանների հիմնադրմամբ այս դատարանների կազմում ևս սահմանվեց ավագ նոտարների պաշտոն՝ որպես նոտարական արխիվների վարիչներ, որոնց պարտականությունն էր պահպանել և վարել նոտարական գանձարան գրքերը, ռեստորները, ակտերը, փաստաթղթերը, կնիքները և այլն<sup>2</sup>: Համաձայն օրենքի՝ ավագ նոտարները համարվում էին պետական ծառայող և իրենց կարգավիճակով հավասար էին Շրջանային դատարանի անդամներին, հետևաբար նրանց նշանակում էր Նախարարների խորհուրդը արդարադատության նախարարի ներկայացմամբ<sup>3</sup>:

Նոտարիատի կառավարման և այդ առթիվ ծագող հասարակական հարաբերությունների կարգավորման հիմնական իրավական աղյօնությունը «Նոտարական մասի կանոնադրությունն» էր, որն առանց փոփոխությունների և լրացումների գործել է Հայստանի Հանրապետությունում և թարգմանվել էր հայերեն: Արդարադատության նախարարությունը և օրենսդիր մարմինն այս օրենքին անդրադարձել են միայն մեկ անգամ, երբ խորհրդարանը 1920 թ. ապրիլի 9-ին ընդունեց օրենք «Նոտարական մասի կանոնադրության 199 հոդվածի փոփոխության մասին»: Սակայն այդ փոփոխությունը էական չէր: Այն, ենելով փողի խիստ արժեգործկան իրողությունից, սահմանում էր միայն ավելի բարձր «ակտատուրք» փաստաթղթերի նոտարական հաստատման համար<sup>4</sup>:

<sup>1</sup> Ст. 1 Полный Свод законов Российской Империи. п.р. Савича, 1904, Т. 16, часть 1, стр. 2, с. 20, 21:

<sup>2</sup> Ст. 1 ЗУП, ф. 206, г. 1, գ. 113, թթ. 1-8, ինչպես նաև «Նոտարական մասի կանոնադրություն», հոդվ. 42:

<sup>3</sup> Ст. 1 ЗУП, ф. 199, գ. 1, գ. 69, թ. 81: «Օրենք դատական մասի պաշտոնատար անձանց նշանակման մասին»:

<sup>4</sup> Ст. 1 Հայստանի պառամենտի օրենքների հավաքածու, 1920, թիվ 8, էջ 60-61:

Նոտարների, ավագ նոտարների՝ իրենց պարտականությունները կատարելու ընթացքում ոչ ճիշտ գործողությունների դեմ գանգատները, ինչպես նաև իրենց պարտականությունները կատարելուց հրաժարվելու գանգատները տրվում էին այն Շրջանային դատարանին, որի դատական տարածքում գործում էր այդ նոտարը։ Շրջանային դատարանի այս առթիվ կայացրած վճիռները կարող էին գանգատարկվել Դատական Պալատում<sup>1</sup>։

Որբանոցների կառավարումը Հայաստանի Հանրապետությունում համանված էր խնամատարության նախարարության տնօրինությանը։ Հետագայում դրանց մի մասը հանձնվեց Ամերիկյան կոմիտեին։ Սակայն որբերի, որոնց թիվը հայտնի հանգամանքների հետևանքով բավական շատ էր, իրավական դրույթունը, նրանց գույքային ու անձնական իրավունքների պահպանությունը բարձիրողի վիճակում էին գտնվում։ Գործող օրենսդրությամբ՝ որբերի իրավունքների պաշտպանության պարտականությունը դրված էր հաշտարար դատավորների վրա, որոնք որբերի շահերի պաշտպանության համար խնամակալներ էին նշանակում։ Սակայն ըստ խնամատարության նախարարության տվյալների՝ գոյուրյուն ունեցող այդ կարգով որբերի շահերը բավարար չափով չէին պահպանվում<sup>2</sup>։ Հետևաբար անհրաժեշտություն էր առաջանում հիմնելու մի մարմին, որն իբրև կենտրոնական կառույց պետք է հսկեր որբերի խնամատարությամբ և հոգարածությամբ գրադարձ անձանց ու հիմնարկությունների գործունեությունը և դրանով իսկ պաշտպան հանդիսանար որբերի անձնական, գույքային իրավունքներին ու շահերին։ Այս հիմնախնդիրը քննարկման համար արդարադատության նախարարությունը 1920 թ. փետրվարի 4-ին գումարեց խորհրդակցություն, որին հրավիրված էին մասնակցելու նաև խնամատարության նախարարության ներկայացուցիչները<sup>3</sup>։ Եթեու նախարարությունների այս համատեղ խորհրդակցության և հետագա քննարկումների ընթացքում որոշվեց, որ այդպիսի մարմինը հիմնադրվի արդարադատության նախարարությանը կից, այլ ոչ թե խնամատարության։ Պատճառն այն էր, որ խնամատարությունը և դրա նկատմամբ հսկողությունը՝ որպես իրավաբանական գործունեություն, իր բնույթով ավելի մոտ էր կանգնած արդարադատության նախա-

<sup>1</sup> Ст. 1 Полный Свод законов Российской Империи. п.р. Савича, 1904, Т. 16, часть 1, «Положение о нотариальной части», стр. 5, №60, 63:

<sup>2</sup> Ст. 1 ЗУУ, ф. 198, г. 1, к. 31, п. 15:

<sup>3</sup> Ст. 1 ЗУУ, ф. 206, г. 1, к. 104, п. 18, 14:

բարությանը<sup>1</sup>: Այս խորհրդակցությունում մշակված համապատասխան օրինագիծը արդարադատության նախարարը 1920 թ. մարտի 31-ին գելուց եղ կառավարությանը: Կառավարությունը հավանություն տվեց օրինագծին և օրենսդրական նախաձեռնության կարգով այն ուղարկվեց Հայաստանի պառլամենտ<sup>2</sup>: Սակայն այդ օրինագիծը հետագայում օրենսդրական հաստատում ստացավ ոչ թե խորհրդարանի, այլ արդեն օրենսդրական լիազորություններով օժտված բյուրո կառավարության կողմից՝ 1920 թ. մայիսի 16-ին<sup>3</sup>: Ըստ այդ օրենքի՝ արդարադատության նախարարությանը կից կիմնվում էր Որբական խորհուրդ, որի խնդիրն էր «պահպանել որբանցներում ապրող որբերի անձնական իրավունքները, ինչպես և պահպանել որբերի գույքային իրավունքները, հայտնաբերելով նրանց գույքային կացությունը և վերականգնել նրանց խախտված իրավունքները»<sup>4</sup>: Օրենքը սահմանում էր նաև, թե ինչպիսի միջոցներով Որբական խորհուրդը պետք է իրականացներ իր առջև դրված խնդիրները: Որբական խորհրդի գործողությունները և որոշումները կարող էին բողոքարկել Շրջանային դատարանում: Որբական խորհրդի իրավասությունը տարածվում էր միայն Հայաստանի Հանրապետության սահմաններում գործող որբանցների որբերի վրա: Եթե Որբական խորհուրդը իր գործունեությամբ հաստատեր իր կենսունակությունը, ապա նախատեսվում էր դրա իրավասությունը տարածել նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայ որբերի վրա, ինչպես նաև որբանցներից դուրս գտնվող որբերի վրա<sup>5</sup>:

Բանտային համակարգը հանրապետության կազմավորման պահից գտնվում էր ներքին գործերի նախարարության՝ Հայաստանի միիցիայի կոմիսարի կառավարման ներքո: Արխիվային փաստաթղթերի հետազոտությունը հաստատում է, որ բանտային համակարգի կառավարման այս ժամանակաշրջանը գրեթ նման էր քառսի, իսկ քանտերը գտնվում էին ոչ բարվոր վիճակում: Այդ հանգամանքը հաստատվ են ժամանակի մամուլը<sup>6</sup>, Հայաստանի բանտային տեսուչի կազմած գեկուցագրերը<sup>7</sup> և այլ արխիվային փաստաթղթեր: Զնայած այն հանգաման-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 206, գ. 1, գ. 28, թ. 105, և ֆ. 206, գ. 1, գ. 104, թ. 16:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 51:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 93:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 198, գ. 1, գ. 31, թ. 16:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 206, գ. 1, գ. 104, թ. 18:

<sup>6</sup> Տե՛ս «Յառաջ», թերթ, Երևան, 1919, 6 նոյեմբերի, թիվ 38:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թթ. 22-28:

թին, որ կառավարությունը բաց էր բողնում անհրաժեշտ միջոցներ բանտային ծախսերը ֆինանսավորելու համար, բայց բանտային գործի ոչ ճիշտ և չվերահսկվող կազմակերպման շնորհիվ ազատազրկման վայրերում, ըստ Ժամանակի մասովի հրապարակումներից մեկի տվյալների, «բանտարկյալները կրել են մեծ զրկանքներ, եղել են նույնիսկ սովամահության դեպքեր: Առողջապահության գործը դրված է եղել չափազանց վատ հիմքերի վրա, այդ պատճառով էլ բոլոր տեսակի տիֆերը ու համաճարակները կատարել են բանտերում իրենց ավերիչ գործը»<sup>1</sup>: Բանտերում ազատազրկվածները պահվել են խառը՝ անչափահասները՝ չափահասների հետ, թերև հանցագործները՝ ծանր հանցագործների հետ, կանայք՝ տղամարդկանց հետ<sup>2</sup>: Պատշաճ մակարդակի վրա չի եղել նաև բանտային ծառայողների կարգապահությունը, լին բացակայել է բանտային ռեժիմը: Այս ամենի հետևանքը զանգվածային փախուստներն էին բանտերից: Անհրաժեշտ մակարդակի վրա չի գտնվել նաև բանտերի տնտեսական գործունեության հաշվապահական և դրամական հաշվետվությունը բանտային վարչություններում:

«Քառուային» վիճակում գտնվող բանտային համակարգի վերակառուցման և կառավարման անհրաժեշտությունից ելնելով՝ արդարադատության նախարարությունը կառավարությունից պահանջում էր իրեն հանձնել այդ ոլորտի կառավարումը<sup>3</sup>: Նախարարությունը դա հիմնավորում էր «բանտային գործը իր օրենսդրական և գործնական իրականացման դրվագներով քրեական արդարադատության խնդիրների հետ» մերձեցնելու անհրաժեշտությամբ: 1919 թ. հունվարի 1-ին Նախարարների խորհրդը, արդարադատության նախարարի գեկույցի համաձայն, ընդունեց որոշում բանտային ամբողջ համակարգը՝ կենտրոնական վարչությունն ու հիմնարկությունները իրենց հաստիքներով ու նախահայիվներով ներքին գործերի նախարարության իրավասությունից հանել և են-

<sup>1</sup> Տե՛ս «Յառաջ», թերթ, Երևան, 1919, 6 նոյեմբերի, թիվ 38:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 22:

<sup>3</sup> Հետաքրքի է այն, որ բանտերը գտնվում էին ներքին գործերի նախարարության տնօրինության տակ, սակայն 1918 թ. ընթացքում արդարադատության նախարարությունն ինքն է երկու անգամ կառավարությունում գեկուցել բանտերում բանտարկյալների վատար վիճակի մասին և միջնորդել նրանց օրապահիկ գումարները բարձրացնելու մասին (տե՛ս ՀԱԱ, ֆ 206, գ.1, գ. 2, թթ. 113, 133): Դա պայմանավորված էր նրանով, որ արդարադատության նախարարը որպես զիսավոր դատախազ, իրականացնում էր հսկողություն բանտային համակարգում օրինականության նկատմամբ:

թարկել արդարադատության նախարարությանը:<sup>1</sup> Արդարադատության նախարարության դիվանի հատուկ հանձնարարությունների պաշտոնյայի գեկուցագրում այդպիսի փոխանցումը հիմնավորվում էր հետևյալ կերպ. «յուրաքանչյուր պետությունում արդարադատության բնական արմատավորողը և պաշտպանը հանդիսանում է արդարադատության նախարարությունը: Այդ իսկ պատճառով այդ նախարարության տնօրինության տակ պետք է գտնվեն նաև վայրերը, որտեղ պատիժ են կրում արդարադատության առջև մեղանչածները»<sup>2</sup>:

Բանտային համակարգի ենթակայության հարցը լուծելոց հետո արդարադատության նախարարությունում անմիջապես ձեռնամուխ եղան բանտային համակարգի վերակառուցմանը և կարգավորմանը: Ամենից առաջ արարադատատության նախարարության նախաձեռնությամբ Հայաստանի խորհուրդը 1919 թ. ապրիլի 4-ին ընդունեց օրենք «Հայաստանի Հանրապետության բանտարկյալների սննդադրամը ավելացնելու մասին»: Այդ օրենքով արդարադատության նախարարին հատկացվեցին լրացուցիչ նապատակային գումարներ՝<sup>3</sup> Այսուհետև՝ 1919 թ. մարտի 31-ին, Նախարարների խորհուրդը ընդունեց օրենք՝ Ալեքսանդրապոլում, Խոբիրում, Զալալոյլում և Քարվանասարայում նոր բանալու մասին<sup>4</sup>:

Հետագայում նախարարությունում մշակվեցին բանտային գործի կարգավորման և բարեկավման նպատակ հետապնդող համալիր միջոցառումներ: Արդարադատության նախարարության ջանքերով նախապատրաստվեց և մշակվեց Հայաստանի Հանրապետությունում բանտային տեսչության մասին ժամանակավոր օրենքի նախագիծը, իսկ վերջինիս հիման վրա՝ այդ տեսչության նախահաշիվների ու հաստիքացուցակների վերաբերյալ օրենքների նախագծերը: 1919 թ. մայիսի 5-ին օրենսդրական լիազորություններով օժտված Նախարարների խորհուրդը, արդարադատության նախարարության առաջարկով, քննարկելով այդ օրինագծերը՝ ընդունեց օրենքներ այդ մասին: Միաժամանակ, բանտարկյալների օրապահիկը 8 ո., բարձրացվեց 12 ո., իսկ բանտարկյալների խնամքի գործը հանձնվեց խնամատարության և աշխատանքի նախարարությանը<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 3:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 206, գ. 1, գ. 8, թ. 265:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի օրենքների ժողովածու, Երևան, 1919, էջ 56:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 55:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 1-ին մաս, թթ. 83-85:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում բանտային տեսչության մասին ժամանակավոր օրենքի»՝ հանրապետությունում բանտային կառավարումը կենտրոնացվում էր արդարադատության նախարարության բանտային տեսչության ձեռքում:<sup>1</sup> Բանտային տեսչության գործունեության վրա անմիջական հսկողություն էր իրականացնում արդարադատության նախարարի օգնականը: Տեսչությունը բաղկացած էր կենտրոնական ապարատից և առանձին բանտերից: Տեսչության կենտրոնական ապարատը կազմված էր բանտային տեսուչից և նրա օգնականից, որոնց նշանակում էր արդարադատության նախարարը՝ նախարարի օգնականի առաջարկությամբ, տեսչության դիվանից:

Առանձին բանտարկատեղերի վարչությունը կազմում էին բանտապետերը և նրանց օգնականները, որոնց նշանակում էր արդարադատության նախարարն իր օգնականի առաջարկությամբ, և այնուղետ պաշտոնավարող քահանաները, բժիշկները, բուժակները: Բանտային պահակությունը բաղկացած էր ավագ և կրտսեր բանտային վերակացուներից:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բանտային տեսչության մասին ժամանակավոր օրենքի»՝ յուրաքանչյուր բանտին կից գոյություն ուներ բանտային կոմիտեն, որի խնդիրն էր բանտերի խնամատարությունը, դատապարտյալների բարոյական և ֆիզիկական վերադաստիարակությունը: Օրենքը սահմանում էր բանտային կոմիտեների կազմը, դրանց իրավասությունը:

«Հայաստանի Հանրապետության բանտային տեսչության մասին ժամանակավոր օրենքի» ընդունումից և բանտային տեսչության կազմակերպումից հետո հանրապետության բանտային համակարգում որոշակի փոփոխություններ տեղի ունեցան: 1919 թ. մայիսի 14-ի արդարադատության նախարարի կարգադրությամբ Հայաստանի բանտային տեսուչ նշանակվեց Տիգրան Իվանի Յարալովը, որը մեծ ջանք և եռանդ ներդրեց ազատազրկման վայրերը Առաջին հանրապետությունում կարգի բերելու համար: Հայաստանի Հանրապետության բանտային տեսուչն իր առջև խնդիր էր որեւէ. «1-ին՝ փրկել բանտային գործը լրիվ քայլայումից և սպասվելիք աղետից և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ հնարավոր կլիներ գրադարձնուի գաղափարական և կազմակերպական աշխատանքով, և 2-րդ՝ բանտային գործը դնել և ուղղիչ վերափո-

<sup>1</sup> Տես ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 207:

խումները ՀՀ-ում տանել Արևմտյան Եվրոպայի կուլտուրական պետությունների օրինակով»<sup>1</sup>:

Արխիվային փաստքերը վկայում են, որ բանտային տեսուչը բավականին կարծ ժամանակում հասել է իր առջև դրված խնդիրների և, հատկապես, վերոնշյալ առաջին խնդրի կատարմանը: Նախ, 1919 թ. հուլիսի դրույքամբ Հայաստանում գործում էին 15 բանտեր<sup>2</sup>: Տեսչության գործունեության առաջնային խնդիրներից մեկը բանտերի հարմար շինությունների որոնումն էր և եղածների վերանորոգումը, իիմնականում կալանավորների ուժերով: Բանտային տեսուչի կարևոր ձեռնարկներից էր նաև բանտային վարչությունների հսկողության, ոեժիմի և կարգապահության կազմակերպումը օրինական հիմքերով: Այդ նպատակով բանտային տեսչությունը Երևանի բանտին կից կազմակերպել էր կարճաժամկետ դասընթացներ բանտային վարչության և հսկողության նոր ծառայողներ պատրաստելու համար<sup>3</sup>: Տեսչությունը իրականացրեց նաև բանտային գործունեության հաշվասահական խստագույն հաշվետվության հաստատման միջոցառումները, որպեսզի բացառվեին պետական միջոցների հափշտակումները: Միաժամանակ, բանտապետերի գործունեության ստուգման համար տեսուչը նշանակում էր հատուկ վերստուգումներ<sup>4</sup>: Հատուկ ուշադրության էր դարձվում բանտերի սանհտարական վիճակի վրա, որի հետևանքով բանտային տեսչությանը հաջողվեց վերջ տալ վարակի հիվանդություններին բանտերում: Բանտային տեսչության իրականացրած կարևորագույն միջոցառումներից մեկ էլ բանտարկյալների աշխատանքի և արհեստանոցների կազմակերպումն էր, որը, ըստ բանտային տեսուչ Յարալովի, կարևոր գործոն էր բանտերի ուղղիչ-քենական խնդիրների ճիշտ իրականացման գործում: Այս աշխատանքների կազմակերպումը հետապնդում էր երկու հիմնական նպատակ՝ նախ՝ ուղղիչ-վերաբաստիարակիչ, երկրորդ՝ պետական բյուջեի ծախքերը ինչ-որ չափով կրծատելու: ՀՀ բանտային տեսուչի եռանդրուն ջանքերի շնորհիվ 1919 թ. ընթացքում, օրինակ, Երևանի բանտում կազմակերպվեցին և գործում էին կոչկակարական, փայտամշակման, նկար-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 23:

<sup>2</sup> Ուստական կայսրության օրոր Հայաստանի Հանրապետության տարածքում կար 6 բանտ, որոնցից երեքը 1918 թ. գտնվում էին բուրքերի գրաված տարածքներում և վերացվել էին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 8, թ. 265):

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 24:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 25:

չական արհեստանոցներ, լվացքատում<sup>1</sup>: Երևանի բանտին կից կազմակերպվել էին նաև բանջարանոցներ և ծաղկանոցներ: ՀՀ մնացած բանտերում բանտարկյալները աշխատում էին դաշտերում և այգիներում մասնակցելով բերքահավաքին: Այս եկամտաբեր աշխատանքների կազմակերպումով և ծախսերի կրճատումով բանտային տեսուչը նախատեսում էր ծածկել պետական բյուջեի բանտերի վրա կատարվող ծախսերի գոնեն մեկ երրորդը<sup>2</sup>:

Դատապարտյալների բարոյակրթական վերադաստիարակման նպատակով Երևանի բանտում հիմնադրվել էին բանտային դպրոց և գրադարան-ընթերցարան, որոնց բացման արարողությանը ներկա է եղել նաև Հայաստանի պառլամենտի նախագահը<sup>3</sup>:

Բանտային աշխատանքների և արհեստանոցների կազմակերպումը այնքան թափ էր առել, որ 1920 թ. մարտի 1-ին Հայաստանի պառլամենտը արդարադատության նախարարի նախաձեռնությամբ ընդունել է օրենք «Օրենքների հավաքածուի 14-րդ հատորի դատապարտյալներին վերաբերող 359, 360, 361 հոդվածների փոփոխության և հավելումների մասին», որով փոփոխության էին ենթարկվում գործող օրենսդրության աշխատանքի դիմաց դատապարտյալների վարձատրությանը վերաբերվող նորմերը: Նախ՝ բարձրացվել են այդ վարձատրությունների կայուն չափերը: Ամբողջ ստացված եկամուտի մնացած կեսը բաժանվում էր երկու մասի՝ 1-ինը հատկացվում էր պետական գանձարանին, իսկ մյուս կեսը մնում էր որպես հատուկ ֆոնդ ազատազրկման վայրերում աշխատանքները կազմակերպելու և ընդլայնելու նպատակով<sup>4</sup>:

Ըստ նախահաշիվների՝ 1920 թ. հուլիսի 30-ի դրությամբ Հայաստանում պետք է գործեին 17 բանտ, նախատեսվում էր բացել ևս երկուսը: Սակայն բանտերի բանակը նախահաշիվներով նախատեսվածին չհասցվեց: 1920 թ. հոկտեմբերի դրությամբ հանրապետությունում կային 13 բանտեր, որոնցում կային «մոտ հազար բանտարկյալներ»<sup>5</sup>:

Հայաստանի առաջին հանրապետության արդարադատության նախարարությունը, լինելով գործադիր իշխանության ճյուղային կենտրո-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 46:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 27:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 91, թ. 28:

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու, 1920, թիվ 3, էջ 60, ինչպես նաև «Յառաջ», թերթ, 1920, մարտ, թիվ 48:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 121, թ. 371:

նական մարմին, շեղվելով գործադիր իշխանության կազմակերպման ճյուղային այլ մարմինների կազմակերպմանը բնորոշ սկզբունքներից, կատարում էր նաև գործադիր մարմնին ոչ հարիր գործառությունը հատկապես իրավապահպան ոլորտներում: Այդ ոլորտներից էր դատախազական հսկողությունը: Առաջին հանրապետությունում դատախազական հսկողության համակարգի դեկավարում էր արդարադատության նախարարը՝ որպես Հանրապետության գլխավոր դատախազ: Դատախազությունն Առաջին հանրապետությունում համարվում էր բացառապես դատական հսկողության մարմին, չուներ ընդիհանուր հսկողության գործառույթներ և կառուցված էր դատատարածքային սկզբունքով: Արդարադատության նախարարը՝ որպես հանրապետության գլխավոր դատախազ, իրականացնում էր հսկողություն դատախազության գործունեության վրա, իսկ դատախազների միջոցով՝ ընդիհանուր իրավասության դատական մարմինների վրա: Հսկողության իրավունքը բուն դատարանների և դատավորների գործունեության նկատմամբ իրականացնում էին միայն վերադաս դատարանները, բայց ոչ դատախազները: Արդարադատության նախարարությունը իրականացնում էր նոտարիատի կառավարումը: Նախարարությանը կից հիմնադրվել և գործում էր որբական խորհուրդը, որի խնդիրն էր պաշտպանել որբանոցներում ապրող որբերի անձնական, գույքային իրավունքները՝ վեր հանելով նրանց գույքային կացությունը և վերականգնելով նրանց խախտված իրավունքները: Արդարադատության նախարարությունը որոշակի շրջանում կատարել է նաև յուրահատուկ իրավապահպան գործառույթ, մասնավորապես հողամասերի սահմանազատման գործում, ինչը սակայն 1919 թ. հուլիսի 29-ին հանձնվեց գյուղատնտեսության և պետական գույքերի գլխավոր վարչությանը: 1919 թ. Նախարարների խորհուրդը բանտարկի ամբողջ հանակարգը, վերցնելով ՆԳՆ-ից, ենթարկեց արդարադատության նախարարությանը, որի կառուցվածքում հիմնադրվեց բանտարկին տեսչությունը՝ Հայաստանի բանտարկին տեսուչի գլխավորությամբ: Այդ պահից նախարարությունում մշակվեցին բանտարկին գործի կարգավորման և բարեկալման նպատակ հետապնդող հանալի՛ օրենսդրական, տնտեսական, կազմակերպական, կրթաքարողչական միջոցառումներ, որոնք բավականին կարծ ժամկետում տվեցին իրենց դրական արդյունքները:

**Anahit Sardaryan**

*PhD student at the Chair of Theory and History of State and Law, YSU*

## **THE CAPACITY OF THE MINISTRY OF JUSTICE IN LAW-PROTECTION IN THE FIRST REPUBLIC OF ARMENIA**

The Ministry of Justice of the First Republic of Armenian, while being a sectoral - central body of the Executive power, deviating from the organizational principles typical for other sectoral bodies of the Executive power, was also enabling functions not appropriate for an executive body, especially in the field of law-protection. The Prosecutor's control was one of such fields. In the First Republic the system of prosecutor's control was headed by the Minister of Justice, as a General Prosecutor. The Prosecutor's office was considered to be judicial control body; it did not have general control functions and was constructed by the judicial-territorial principle. The Minister of Justice, as the General Prosecutor of the Republic, executed supervision upon prosecution practice, and upon common judicial bodies of general jurisdiction through prosecutors. The right of supervision upon the activities of courts and judges had only superior courts, but not prosecutors. The Ministry of Justice executed management of the Notaries. An orphan board was established under the Ministry, the task of which was to protect personal, property rights of orphans living in the orphanages, raising their economic situation and restoring their violated rights. In a certain period of time the Ministry of Justice had executed also specific law-protection function, in particular, defining the land borders, which was given to the General Department of Agriculture and State Property in 29 of July, 1919. In 1919 the Council of Ministers took all the prison system from the Ministry of Internal Affairs and gave it to the Ministry of Justice, and a prison inspection was established in its structure, headed by the Prison Inspector of Armenia. From that date complex legislation, economic, organizational, educational events having regulating and improving objectives were developed by the Ministry, and they gave positive results in a rather short period of time.